

Թեքք	ԱՆՎՈՐՈՒՄԸ	ԾԱՌԱԹՈՒԹՅՈՒՆ
1	Ընդհանուր տվյալներ	ՁԿ-1
2	Առաջին հարկի հաստակագիծ 0.00 նիշով ներքին B1,T3, T4 և K1 համակարգերով	ՁԿ-2
3	Երկրորդ հարկի հաստակագիծ 0.00 նիշով ներքին B1,T3, T4 և K1 համակարգերով	ՁԿ-3
4	B1 համակարգի սխեման	ՁԿ-4
5	T3,T4 համակարգերի սխեմաները	ՁԿ-5
6	K1 համակարգի սխեմաները	ՁԿ-6
7	Գլխավոր հաստակագիծ B1 և K1 ներտարածքային համակարգերով Մ 1:250	ՁԿ-7
8	B1 համակարգի երկայնական կտրվածքը	ՁԿ-8
9	K1 և K համակարգերի երկայնական կտրվածքը	ՁԿ-9
10	Աշտատանքային ծավալների ամփոփագիր	ՁԿ-10
11	Աշտատանքային ծավալների ամփոփագիր (շարունակություն)	ՁԿ-11

ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԸՍՏ "Ջ և Կ" ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ				
Հատկարգի անվանումը	Պահանջվող ջրի ճնշումը մ ջ. ս	Հաշվարկային ծախսեր մ³/օր max	մ³/ժամ max	լ/վրկ max
I. Խմելու- տնտեսական ջրամատակարարում (B1)	14	2.7	0.86	1.31
II. Կենցաղային կոլուդի (K1)		2.7	0.86	2.91

Ընդհանուր ցուցումներ

ՀՀ Արարատի մարզի Արուսյան համայնքի մանկապարտեզի ներքին և ներտարածքային ջրամատակարարման և կոյուղու աշխատանքային նախագիծը իրականացվել է համաձայն նախագծման առաջադրանքի, ճարտարապետա-շինարարական զծագրերի,գլխավոր հաստակագծի, տեխնիկական պայմանների և ՀՀ տարածքում գործող շին.նորմերի և կանոնների: Նախագծով նախագծված են ներքին և ներտարածքային Ջ և Կ հետևյալ համակարգերը՝

- Ներքին ցանցեր**
- 1. Խմելու-տնտեսական ջրամատակարարում(B1)
 - 2. Տաք ջրամատակարարում (T3, T4)
 - 3.Կենցաղային կոյուղի (K1)

- Ներտարածքային ցանցեր**
- I հմելու-տնտեսական ջրամատակարարում(B1)
 - II. Կենցաղային կոյուղի (K1)

Նախագիծն իրականացվում է գործող նորմերին ու կանոններին համապատասխան

Ներքին ցանցեր
1. Խմելու-տնտեսական ջրամատակարարում (B1)

Համակարգը նախատեսված է մանկապարտեզի խմելու-տնտեսական կարիքների համար: Ջրամատակարարումը իրականացվում է նախագծվող ներտարածքային պոլիէթիլենե ջրագծի ցանցից՝ d=40մմ պոլիէթիլենե PE -100 բարձր խտության խմելու ջրի ճնշումային խողովակներով (մուտքագիծ)։ Ընդունված է մեկ մուտքագծով փակուղային համակարգ։ Ներքին ցանցը մոնտաժվում է d=40-20մմ պոլիպրոպիլենային խողովակներով և ծնավոր մասերով։ Բոլոր ամհրաժեշտ տեղերում նախատեսվում է փակող արմատուրա։ Ներքին ցանցի խողովակները ցանկալի է մոնտաժել հատակի շերտի և սան. հանգույցների հախճաՍալերի տակ։

2. Տաք ջրամատակարարում (T3, T4)

Համակարգը նախատեսված է մանկապարտեզի լվացարանների, խոհանոցակոնցերի և ցնցուղարանների տաք ջրամատակարարման համար, որը իրականացվում է մանկապարտեզում նախագծվող արևային տաք ջրամատակարարման համակարգի միջոցով ։ Նախագծում նախատեսված են ցիրկուլացիոն ջրագծեր ։ Ընդունված են d=32-20մմ պոլիպրոպիլենային խողովակներ և ծնավոր մասեր։Ամհրաժեշտ տեղերում նախատեսված է փակող արմատուրա։ Ներքին ցանցի խողովակները ջերմամեկուսացված են ռետինե 25-20մմ խողովակներով, ցանկալի է բոլոր խողովակները մոնտաժել հատակի շերտի և սան. հանգույցների հախճաՍալերի տակ։

3. Կենցաղային կոյուղի (K1)

Համակարգը նախատեսված է մանկապարտեզի սան. տեխնիկական սարքերից, խոհանոցակոնցերից և հոսակներից կենցաղային կեղտաջրերի հեռացման համար։ Կեղտաջրերի հեռացումը կատարվում է ինքնահոս , կոյուղու 2 թողարկներով (K1-1, K1-2) ։ Կեղտաջրերը հեռացվում են ներտարածքային կոյուղու ցանցի դիտահորեր։ Ներքին ցանցում ընդունված են կոյուղու պլաստմասե Φ100 - 50մմ խողովակներ և պլաստմասե ծնավոր մասեր։

Ներտարածքային ցանցեր

1. Խմելու-տնտեսական ջրամատակարարում(B1)


Համակարգը նախատեսված է մանկապարտեզի ջրամատակարարման կարիքների համար։ Ջրամատակարարումը իրականացվում է հասնջյան փողոցով՝ անցնող dе160մմ պոլիէթիլենե ջրագծից՝(համաձայն տեխնիկական պայմանի) de=110-40մմ պոլիէթիլենե PE-100 բարձր խտության խմելու ջրի ճնշումային խողովակներով, որոնց համար խրամուղում ստեղծվում է 10սմ հաստության ավազի նախապատրաստական և dе+15սմ ավազի պաշտպանիչ շերտեր։ Սահմանազատման կետում (մանկապարտեզի տարածքում) նախատեսված է տեղադրել ջրամատակարարման կլոր հոր D1500մմ, H=1450մմ հավաքովի ե/բ էլեմենտներից, հակահրդեհային էիդրանտի և փակակի համար և ջրաչափական հոր 720x720x1000 (հ)՝ ջրաչափական հանգույցով (D=32մմ ջրաչափ, D32մմ ֆիտր և D32մմ փակաճ)։

2.Կենցաղային կոյուղի (K1)

Համակարգը նախատեսված է մանկապարտեզի կեղտաջրերը ներտարածքային ցանցով հեռացման համար։ Կեղտաջրերը ինքնահոս հեռացվում և լցվում են տարածքում նախատեսվող կենցաղային կեղտաջրերի մաքրման TOPAS 30 կայանի մեջ, որտեղից էլ մաքրված կեղտաջրերը լցվում են մանկապարտեզին հարակից տարածքի ձորակը։ Ներտարածքային ցանցում նախատեսված են կոյուղու պոլիէթիլենե բարձր խտության գոֆրոխողովակներ Φ150-200մմ , որոնց համար խրամուղում ստեղծվում է 10սմ հաստության ավազի նախապատրաստական և dе +15սմ ավազի պաշտպանիչ շերտեր և պրոպատե էլ. եռավյուղ D108x4մմ խողովակներ, որոնք ենթարկվում են հավակոտոզիոն մեկուսացման։ Բոլոր ամհրաժեշտ տեղերում նախատեսված են կոյուղու դիտահորեր։ Հորերը կլոր կտրվածքի են, ե/բ էլեմենտներից՝ ե/բ ծածկի սալերով և միաձույլ բետոնե առվակներով։

Հողային աշխատանքները և միացումները գոյություն ունեցող ցանցերին կատարել համապատասխան կազմակերպությունների ներկայացուցիչների ներկայությամբ։

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ



Ծրագրի առաջադրանք՝ TAT-05				Արժվանի մանկապարտեզի կառուցում		
				Ջրամատակարարում և կոյուղի	ՓՈՒԼ	ԹԵՐԹ
					ԱԼ	ՋԿ-1
Գլխ. մասն.	Ռ.Խաչատրյան			Ընդհանուր տվյալներ		
Պաշտոն	Ազգանուն	ստորագր.				